ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«27» 03 2021 թ. Թիվ 39-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԹԻՎ 73-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 21-րդ հոդվածի 1-ին մասը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքում Կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչությունից՝ առանձնացման եղանակով, ստեղծել Կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության Ապարանի քննչական բաժին:

2. Կոմիտեի նախագահի 2021 թվականի հուլիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային

ստորաբաժանումների կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին» թիվ 73-Լ հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) հրամանի N 1 հավելվածի 5-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության միջակետը փոխարինել ստորակետով.

2) հրամանի N 1 հավելվածի 5-րդ կետի 1-ին ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «բ» պարբերությամբ.

«բ. Ապարանի քննչական բաժին.».

3) հրամանի N 2 հավելվածի 6-րդ կետի 1-ին ենթակետի աղյուսակի 3-րդ կետում «1» թիվը փոխարինել «2» թվով.

4) հրամանի N 2 հավելվածի 6-րդ կետի 1-ին ենթակետի աղյուսակի 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:»:

3. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին:

Ա. ՔՅԱՐԱՄՅԱՆ